**«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ**

**վերապատրաստող կազմակերպություն**

Ավարտական հետազոտական աշխատանք

**Թեմա՝** Նախադասության տեսակների ուսուցումն ըստ հնչերանգի ժամանակակից և ավանդական մեթոդների կիրառմամբ:

**Կատարող՝** Լուսինե Ժորայի Ամբարյան

Գյումրու N38 հիմն. դպրոց, դասվար

**Ղեկավար՝** Կարինե Ալեքսանյան

**Գյումրի 2023թ.**

# Բովանդակություն

1.Ներածություն.....3

Գլուխ1.Ժամանակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունները տարրական դասարաններում…….....5

Գլուխ 2.Նախադասության տեսակների դասավանդումը ըստ հնչերանգի.....8

Եզրակացություն.....20

Օգտագործված գրականության ցանկ.....21

# Ներածություն

**Հետազոտության նպատակն** է տեսականորեն մշակել և գործնականում կիրառել ըստ հնչերանգի՝ նախադասության տեսակների ուսուցման արդյունավետ մեթոդիկա: **Հետազոտական հարցն է** <<Ինչպես կազմակերպել ըստ հնչերանգի՝ նախադասության տեսակների ուսուցումը 4-րդ դասարանում ժամանակակից մեթոդների օգնությամբ>>: Մեր ուսումնասիրությունն իրականացրել ենք՝ առաջնորդվելով այն մեթոդական սկզբունքներով, որ տարրական դպրոցում նախադասության ուսուցումը արդյունավետ կընթանա, եթե

1.բացահայտվեն հանրակրթական դպրոցի I-IV դասարանների մայրենի լեզվի ծրագրով նախատեսված քերականական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները

2.մշակվեն քերականությունից սովորողների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները

3.մշակվում են և կիրառվում լեզվական վարժությունների և առաջադրանքների այնպիսի համակարգ, որը կնպաստի տարրական դպրոցում քերականական նյութի գործնական յուրացմանը:

Մեթոդական նշված սկզբունքները տարրական դպրոցում ի կատար ածելու համար

1. Դիտարկել ենք քերականության ուսուցման գործընթացը անձնակողմնորոշված, աշակերտակենտրոն, դրդապատճառային, հետազոտական և համագործակցային դարձնելու հնարավորությունները,
2. Ձևավորել ենք և մեր պրակտիկայում փորձարկել քերականական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման արդյունավետ միջոցների համալիր՝ հաշվի առնելով քննադատական մտածողության առաջնայնությունը շարահյուսական գիտելիքների ձեռքբերման և համապատասխան կարողությունների ձևավորման գործընթացում:

**Թեմայի արդիականությունը:**

Անցումային տարիներին Հայաստանի ողջ տնտեսությունը լուրջ ցնցումներ ապրեց, որը հանգեցրեց ազգաբնակչության կենսամակարդակի կտրուկ նվազման: Ու թեև կրթական ոլորտը համեմատաբար բարենպաստ վիճակում մնաց,

այնուամենայնիվ, կարճ ժամանակ անց ակնհայտ դարձան կրթության առջև ողջ սրությամբ դրված մի քանի սկզբունքային խնդիրներ: Մեր նպատակն է բացահայտել և սահմանել աշակերտների համար նոր մեթոդներով աշխատանքի կազմակերպման այն ձևերը, որոնց ժամանակ որոնողական գործունեության ճանապարհով արդյունքի կհասնեն ոչ միայն բարձր, այլև միջակ և թույլ մտավոր կարողություններ ունեցող աշակերտները:

**Հետազոտության գիտամեթոդական հիմքն** են հանդիսացել լեզվաբանության, մանկավարժության, մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկայի, հոգեբանության դասականների այն հիմնարար սկզբունքները, որոնք ընդունված են և գործնականորեն հիմնավորված մանկավարժամեթոդական գիտությունների կողմից: Հետազոտության հիմքում ընկած են անցյալի և արդի լեզվաբանների, մանկավարժների, մեթոդիստների՝ մեր հիմնախնդրի առնչությամբ մոտեցումները:

**Հետազոտության մեթոդները:**

Հետազոտության մեթոդների ընտրությունը պայմանավորված է մեր մանկավարժական պրակտիկայի ընձեռած լայն հնարավորություններով, ուսումնասիրության նպատակներով, հիմնախնդրի բնույթով, առաջադրված վարկածով:

**Աշխատանքի ծավալը և կառուցվածքը**: Աշխատանքը բաղկացած է 21 համակարգչային էջից: Այն ընդգրկում է բովանդակություն,ներածություն, երկու գլուխ, դասի պլան, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ:

# Գլուխ 1. Ժամանակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունները տարրական դասարաններում

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները կրթական ոլորտի կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում: Ուսուցման արդի խնդիրներից է կրթության որակի բարելավումը: Այսօր անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել ոչ միայն գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, այլ նաև այդ ամենը գործնականում կիրառելու կարողություն: Այդ նպատակով պետք է ուսուցումը դարձնել ավելի մատչելի: Մատչելիությունը հնարավորություն է տալիս ընտրել տարբեր մեթոդներ և ձևեր՝ ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար: Տարրական դասարաններում կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնց կիրառման արդյունքում սովորողները ոչ թե մեխանիկորեն յուրացնում են պատրաստի գիտելիքներ, այլ իրենք ակտիվորեն մասնակցում են գիտելիքների ձեռքբերմանը: Ժամանակակից մեթոդների կիրառումը համապատասխանեցվում է տարրական դասարանների աշակերտների տարիքային առանձնահատկություններին: Շատ կարևոր է հիշել նաև հետևյալ հանգամանքը: Ե՛վ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդներով ուսուցում կազմակերպելիս՝ պետք է նկատի ունենալ, որ դպրոցի պահանջը որակյալ կրթություն տալն է:

Կրթությունը որակյալ կլինի այն դեպքում, երբ համաշխարհայնացման ներկա արագացող տեմպերում մենք կկարողանանք քայլել աշխարհի հետ համընթաց: Եվ աշխարհից չմեկուսանալու, բայց նաև նրան չձուլվելու համար մենք պիտի ձևով ընդունենք համաշխարհայնացումը, իսկ բովանդակությամբ ազգայինը, որի հիմքում ընկած են՝ 1.լեզվամտածողությունը, 2.ազգային գաղափարախոսությունը, 3 .ազգային արժեհամակարգը, 4 .ավանդույթները:

Թվարկվածը կարևոր է հատկապես երեխայի կրթության և դաստիարակության վաղ շրջանից նրա մեջ ներարկելը, քանի որ երեխան նման է ճերմակ թղթի,

որի վրա պետք է գրել առանց ջնջումների, հակառակ պարագայում հետքերը կարող են տեսանելի մնալ նրա ամբողջ կյանքում: Մեր օրերում գնալով ավելի շատ է խոսվում նորագույն մեթոդների ներմուծման և կիրառության մասին: Քննենք նորագույն կամ ժամանակակից մեթոդների կիրառությունների

առանձնահատկությունները: Քանի որ նորագույն մեթոդները այսօր կենտրոնացված են «Զարգացնող կրթություն»[1] ընդհանուր հասկացության տակ, ապա ուսուցչի գործը դառնում է փոքր ինչ դյուրին, որովհետև մեծանում է նրա ընտրության հնարավորությունը մեթոդի հարցում: Նորագույն մեթոդները աչքի են ընկնում իրենց պարզությամբ, մատչելիությամբ և սրանցից ամեն մեկը որոշակի միտվածությամբ ծառայում է երեխաների մեջ այս կամ այն

Դասախոսություններ Լեզվի մեթոդիկա առարկայից, ՇՊՀ, Հումանիտար գիտությունների ամբիոն, դասախոսություն 11, էջ

ունակությունը զարգացնելուն: Ուսուցիչը նախապես պետք է սահմանի, թե այս կամ այն մեթոդի կիրառումով ի՞նչ է ակնկալում ստանալ աշակերտից և աշակերտի ո՞ր ունակությունն է զարգացնում, ո՞ր ունակության ձևավորման ուղղությամբ է աշխատում: Օրինակ «Ծրագրավորված ուսուցմամբ» ուսուցիչը լուծում է մի քանի խնդիր: Նախ նա իր և աշակերտների միջև ստեղծում է հետադարձ կապ, որի շնորհիվ կարող է իմանալ, թե աշակերտը որ թեման ինչպես է յուրացրել: Ապահովում է աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը: Հավասարապես ուշադրություն է հատկացվում բոլոր աշակերտներին: Այս դեպքում նյութը բաժանվում է իրար հետ կապված մասերի, որոնք տրվում են հատվածներով: Մի քանի վեկտորներով աշակերտները ստանում են գիտելիքներ և հենց իրենք կարող են ստուգել իրենց ու պարզել սեփական իմացության մակարդակը տվյալ նյութից: Կարծում ենք՝ տարրական դասարաններում, ներկայումս ուսուցման ամենահարմար ձևը «Բազմաբնույթ մտածողության տեսությամբ»[2] առաջնորդվելն է: Այս տեսութ-յունը համակարգ է, որում ներառված ամենաբազմազան մեթոդները և ձևերը

միտված են աշակերտների համակողմանի զարգացմանը: Հեղինակը Հովարտ Գարդներն է,աշխատությունը կոչվում է «Գիտակցության կառուցվածքը», և լույս է տեսել 1983թ.: Տեսության էությունը հետևյալն է. «Չափազանց կարևոր է ճանաչել մարդու բոլոր մտածողությունները և դրանց զուգորդման տեսակները»: Գարդենը առաջարկում է մտածողության 7 ձև, որոնց հետագայում ավելացնում է ևս 3-ը: [1]

Դրանք են խոսքային-լեզվական, տրամաբանական, մաթեմատիկական,

մարմնաշարժողական, տարածական, երաժշտական, ներանձնային, բնագիտական և հոգևոր: **Քննադատական մտածողությունը** աշակերտի մոտ պիտի ձևավորել դեռևս տարրական դասարաններում: Սա մտածողության մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել նյութը, մտածել դրա մասին, վերլուծել, զուգորդել իրականության հետ, ակնկալել արդյունք, կյանքում կիրառելու կարողություն: Մտածողության այս ձևը ունի մեթոդների իր համակարգը, որոնց էլ ուզում ենք անդրադառնալ: Առաջինը արդեն քաջածանոթ ԽԻԿ համակարգն է, որն ենթադրում է եռափուլ համակարգ՝ Խթանում, Իմաստի ընկալում և Կշռադատում:[1]

**Առաջին փուլում** խթանվում են սովորողի առկա գիտելիքները տրված թեմայի շուրջ: Դա սովորողին պարտադրում է վերլուծել իր գիտելիքները և մտածել այն մասին, թե ինչ են այնուհետև մանրամասնորեն ուսումնասիրելու: Այս փուլի էությունն այն է, որ նորը առնչվում է հայտնիին, գիտելիքները բխում են իրարից, ուղղվում են սխալները: Այս փուլի մյուս նպատակը սովորողներին ակտիվացնելն է, իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ սովորողը ձգտում է մտքերն արտահայտել իր բառերով:

**Իմաստի ընկալման** փուլում սովորողը շփման մեջ է մտնում նոր մտքերի հետ: Այդ շփումը կազմակերպվում է տեքստի ընթերցման, ֆիլմի դիտման և այլ ձևերով:Այս փուլում սովորեցնողի ազդեցությունը նվազագույնն է սովորողի վրա: Այս փուլում հնարավոր է նաև բարձրացնել երեխայի հետաքրքրությունը: Կշռադատման փուլը յուրացման գործընթաց է, որը բնութագրվում է իրական և երկարատև փոփոխություններով, քանի որ աշակերտները մտովի կապ են ստեղծում նոր մտքերի, տեղեկությունների և հնի միջև, ձգտում են սեփական բառապաշարով վերարտադրել: Այս մտածողության մեթոդներն են «Մտագրոհ», «Ուղղորդված ընթերցանություն», «Բանալի երևույթներ» և այլն:

[1,2] Ս.Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում (օգնություն ուսուցչին), Գյումրի, 2006թ, էջ 6,10

## Գլուխ 2. Նախադասության տեսակների դասավանդումը ըստ հնչերանգի

Մայրենիի դասանյութերը ընթերցելիս պետք է ուշադրություն դարձնել կետադրական նշաններին: Հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների կետադրությունը երեխաները գործնականորեն ճանաչում են դեռևս գրաճանաչության շրջանում՝ դասագրքում զետեղված ստեղծագործություններն ընթերցելիս, և օգտագործում բանավոր ու գրավոր խոսքում: Առոգանության նշանների մասին երեխաների ունեցած գործնական ունակությունների կրկնման ճանապարհով և հենվելով դրանց կիրառության վրա՝ գաղափար է տրվում ըստ արտասանության երանգի նախադասությունների 4 տեսակի մասին՝ հարցական, հրամայական, բացականչական, պատմողական:

Բնագիրն ընթերցելուց հետո երեխաներն ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, որ բնագիրն ընթերցելիս ձայնը շարունակ փոփոխվում է:

Հերոսները երբեմն հարցնում են, երբեմն՝ բացականչում, երբեմն՝ հրամայում, երբեմն՝ հանգիստ պատմում: **Եղանակն սկսեց վատանալ, ուժեղ քամի բարձրացավ, ձյուն տեղաց, բուք ու բորան սկսվեց:** Նրանք նկատում են, որ նկարագրական նախադասությունները կարդում են հանդարտ, միապաղաղ արտասանությամբ:

Ճամփորդների բացականչությունները կարդալիս բարձրացնում են ձայնը և երկարացնում բառերը. «Ի՜նչ ցուրտ է, դիմանալ չի լինում»,- ասաց առաջինը: Հարցը տալուց ձայնը ուրիշ կերպ են բարձրացնում: **Ի՞նչ անեին ճամփորդները:** Իսկ տալուց ձայնը ուրիշ կերպ են բարձրացնում: **Ի՞նչ անեին ճամփորդները:** Իսկ ճամփորդի հրամանները կարդում էին կարճ ու կտրուկ. «Հարևա՛ն, գնա՛ փայտի»:

Կարդում են առաջադրանք 3-ը:

Այս «ընկերներն» օգնեցի՞ն, որ դու ճիշտ հնչերանգով կարդաս նախադասությունները:

՞ – ինձ ճանաչո՞ւմ ես: ՛ – ճանաչի՛ր ինձ: ՜ – Ճանաչեցի՜ր ինձ:

**Իմաստի ընկալման փուլ**

Կատարում են 4-րդ առաջադրանքը:



Դու տեսնում ես, որ առաջին նկարում պատմում են, երկրորդում՝ հարցնում, երրորդում՝ հրամայում, չորրորդում՝ բացականչում:

Ըստ յուրաքանչյուր նկարի՝ կազմի՛ր մի նախադասություն և կարդա՛ համապատասխան հնչերանգով:

1.Մայրիկը կանգնած խոսում էր լսափողով:

2. Այդ ո՞ւր ես գնում, Արմե՛ն:

3.Արագ այստեղ կանչի՛ր բոլոր աշխատողներին:

4.Ջա՜ն, հիմա ես քեզ կհաղթեմ:

Այստեղից երեխաները եզրակացնում են՝

| |
|---|
| **Ըստ արտասանության երանգի՝ նախադասությունները լինում են՝ պատմողական, հրամայական, հարցական, բացականչական:** |

**Կշռադատման փուլ**

Կարդա՛ և որոշի՛ր նախադասությունների տեսակներն ըստ արտասանության երանգի:

| | |
|---|---|
| Վաղ գարնանը իր ճոճին | Ինչո՞ւ քնից չես ելնում, |
| Ծիտիկն ասաց բողբոջին. | Ի՞նչ ես գտել անկողնում. |
| -Ա՛յ իմ քույրիկ վարդերես, | Վե՛ր կաց, շողով լվացվի՛ր, |
| Կարոտե՜լ եմ ախր քեզ.. | Լույսը քեզնով թո՛ղ բացվի: |

Այս ընդհանուր տեղեկությունն ամրապնդելու և խորացնելու համար նպատակահարմար է նախադասության այս տարատեսակների առանձին-առանձին ուսումնասիրությունը, որը իսկապես նոր բան կավելացնի այդ ընդհանուր տեղեկությանը, կխորացնի և կամբողջացնի այն:

Կարելի է նախադասության տեսակների ուսումնասիրությունը սկսել պատմողական բնույթի նախադասությունից:

**Դասի թեման՝** «Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը»,

Պամողական նախադասություն:

**Անհրաժեշտ նյութեր՝** դասագիրք, նկարներ, քարտեր

**Մեթոդը՝** վերլուծական-համադրական, խմբային աշխատանք

**Դասի նպատակները՝ ա)ուսուցողական՝**

- կընթերցեն բնագիրը՝ ձայնի համապատասխան հնչերանգով, հետևելով առոգանության նշաններին,
- բնագիրից կընտրեն և կկարդան պատմողական նախադասությունները,

Երեխաները կարդում են բնագիրը, կատարում վերլուծություն:Նրանք նկատում են, որ մարդիկ միմյանց հետ խոսելիս պատմում են իրենց տեսածի, լսածի, կարդացածի կամ զգացածի մասին, որի ընթացքում օգտագործում են պատմողական բնույթի նախադասություններ:

*Ճաշարանատերը փարչը վերցրեց և շուռ տվեց: Բուրատինոն ամբողջ ուժով սեղմվեց փարչի պատերին, որ վայր չընկնի:*

Երեխաները ուսուցչի օգնությամբ տալիս են սահմանումը:

| |
|---|
| **Պատմելու ձևով ասված նախադասությունը կոչվում է պատմողական նախադասություն:** |

Կատարում են խմբային աշխատանք, որի ժամանակ խմբերին բաժանվում է թերթիկներ հետևյալ առաջադրանքով.

**Կարդա՛ և որոշի՛ր պատմողական նախադասությունները: Վերապատմի՛ր պատմվածքը:**

Երկնքում ծագեց կարմիր արևը և իր ոսկե շողերը դրեց ամենուր՝ երկիրն արթնացնելու:

Առաջին շողը սահեց և ընկավ արտույտի բույնը: Արտույտը սթափվեց, դուրս թռավ իր բնից ու, բարձր-բարձր ճախրելով, սկսեց երգել իր արծաթահնչյուն երգը.

«Ա՜խ, ինչ լավ է վաղորդյան թարմ օդում, ինչ լավ է ազատ արձակ»:

Երկրորդ շողն ընկավ նապաստակի վրա, նապաստակն ականջները խլշեց և ուրախ վազ տվեց ցողապատ մագագետնով: Նա գնում էր հյութակի խոտ ճաշելու իր նախաճաշի համար:

Երրորդ շողն ընկավ հավաբույնը: Աքաղաղը թևերը թափահարեց ու կանչեց.

-Ծուղրուղո՛ւ...

Նյութը յուրացրած աշակերտները աջակցում են թույլ սովորողներին:

**Կշռադատման փուլ: «Շրջանաձև գրություն»:**

Երեխաներից յուրաքանչյուրը տվյալ խմբային աշխատանքի ընթացքում պետք է ոչ միայն ինքնուրույն խորհի տրված թեմայի կամ նկարի շուրջ, այլև իր մտքերը համաձայնեցի խմբի անդամների հետ: Նրանց տրվում է տետր և գրիչ: Ամեն մեկն ըստ թեմայի գրում է մի քանի նախադասություն, այնուհետև տետրը փոխանցում է հարևանին, որը պետք է շարունակի իր խոհերը: Տետրն ի վերջո փոխանցվում է առաջին միտքը գրողին:

**Դասի թեման-**«Սև արկղի գաղտնիքը», հարցական նախադասություն

Դասագիրքը՝ Վ. Սարգսյան, «Մայրենի 4 »:

**Անհրաժեշտ նյութեր՝** դասագիրք, կավիճ, թղթից պատրաստված ծառ, կտրատված շրջաններ, քարտեր առաջադրանքներով;Մեթոդը՝ **«Վերլուծական-համադրական», «Խմբային աշխատանք», «Իմաստության ծառ» հնարը:**

**Դասի նպատակները**

- գաղափար կկազմեն հարցական նախադասոթյան մասին,
- կձևավորվի հաղորդակցային կարողություն՝ տարբեր իրավիճակներում:
- կզարգանա աշակերտների բանավոր և գրավոր խոսքը:

**Խթանման փուլ:**Երեխաներին հանձնարարվում է ընթերցել «Հազարան բլբուլ» հեքիաթից քառյակներ՝ ուշադրություն դարձնել՝ ինչպե՞ս են արտասանվում ընդգծված նախադասությունները, ինչպիսի՞ն է դրանց կետադրությունը:

Բայց **ո՞վ** ես դու, սիրո՛ւն աղջիկ, Եվ **ինչո՞ւ** ես էդպես աղի

**Ի՞նչ** ես էստեղ դու շինում, Արցունք թափում, լաց լինում:

Կատարվում է վերլուծություն , որոշում , թե դևի ամրոցում փակված Արեգը սիրուն աղջկան ի՞նչ հարցեր է տալիս:

**Իմաստի ընկալման փուլ :**Դասարանը բաժանվում է խմբերի, յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է բնագրից կարդալ մեկական հատված՝ առանձնացնելով այն նախադասությունները, որտեղ հերոսները միմյանց հարցեր են առաջադրում:

**1-ին խումբ**

-ՈՒրեմն այսպես. Կպատրաստենք մի սև, փոքրիկ արկղ, նրա մեջ ոչինչ չենք պահի և կկանչենք երկրի իմաստուններին, թող գուշակեն՝ ինչ կա և չկա արկղի մեջ:

**2-րդ խումբ**

-Դե՛, գուշակի՛ր, ամենագե՛տ, ի՞նչ կա այս փոքրիկ արկղի մեջ,-ասաց թագավորը,- եթե ճշգրիտ գուշակես, թագավորությանս կեսը քեզ կտամ:

**3-րդ խումբ**

«Իսկ գուցե ճի՞շտ է իմաստունը, ո՞վ իմանա՝ զորավարն ու վեզիրն աչք չունե՞ն իմ գահին, երեսանց ժպտում են ու քծնում, իսկ մտքում գուցե իմ մահն են ուզում»:

Կատարելով վերլուծություն երեխաները նկատում են, որ մարդիկ խոսելիս իրար հարցեր են տալիս՝ որևէ բան պարզելու կամ իմանալու համար: ՈՒսուցչի օգնությամբ երեխաները տալիս են սահմանումը.

| |
|---|
| **Հարցում արտահայտող նախադասությունը կոչվում է հարցական նախադասություն:** |

Հարցում արտահայտող բառի վրա դրվում է հարցական նշան(՞): Հարցական նշանը դրվում է բառի այն ձայնավորի վրա, որտեղ հարց տալիս բարձրանում է ձայնի ելևէջը: Սովորաբար դա լինում է բառի վերջին վանկի ձայնավորը՝ **ինչո՞ւ, իսկապե՞ս, ինչպե՞ս, ինչպիսի՞, որտեղի՞ց, գնացի՞ր, հասկանո՞ւմ ես** և այլն: Բայց, օրինակ, **մի՞թե** բառի ճիշտ արտասանությունը պահանջում է հարցական նշանը դնել առաջին վանկի ձայնավորի վրա՝ մի՞թե, և ոչ թե՝ միթե՞:

**Խաղ՝ «Իմաստության ծառ»:** Երեխաները մեկ անգամ ևս ուշադիր ընթերցում են բնագիրը: Այնուհետև յուրաքանչյուրը թղթի վրա գրում է բնագրի

վերաբերյալ որևէ հարց: Բոլոր հարցերն ամրացվում են ծառին: Աշակերտները զույգերով մոտենում են ծառին «քաշում են» հարցը և փորձում պատասխանել: Մյուսները գնահատում են և՛ հարցը, և՛ պատասխանը: Վերջում որոշում են, թե ով էր դասարանի ամեն




**Կշռադատման փուլ**

**Խմբային աշխատանք:** Դասարանը բաժանել խմբերի, որոնցից յուրաքանչյուրը կստանա առաջադրանքների քարտ:

**1-ին խումբ**
**Հետևյալ պատմողական նախադասություն դարձրո՛ւ հարցական:**
Կար մի դաժան թագավոր: Արկղը դատարկ էր:
Իմաստունը գտավ լուծումը: Փոս փորողը փոսն է ընկնում:

**2-րդ խումբ**
**Տեղադրի՛ր ի՞նչ կամ ինչո՞ւ հարցում արտահայտող բառերը:**
... կըլինի, ասա՛, գրի՛չ, ... իմ մեծ քրոջ ձեռքին
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ: Գրում ես միշտ վարժ ու կարգին :

**3-րդ խումբ**

**Պատմողական նախադասությունից ստացի՛ր մի քանի հարցական նախադասություն այնպես, որ հարցը մեկ առ մեկ վերաբերի նախադասության բոլոր անդամներին:**

1.Առավոտյան մայրիկը արթնացրեց Աշոտիկին:

**Տնային հանձնարարություն: Գտրի՛ր պատմողական և հարցական նախադասություններ: Հարցում արտահայտող բառերի վրա դի՛ր հարցական նշան: ( Էջ 128, առ.3)**

**«Իմաստության ծառ»** հնարի օգտագործմամբ երեխաները տեքստի շուրջ կատարում են բազմազան ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք էլ նպաստում են ընթերցածի վերլուծությանը և ստեղծագործարար ինքնարտահայտվելու զարգացման:

Դասի թեման՝ «Թագավորն ու խաբեբան»,հրամայական նախադասություն

Դասագիրքը՝ «Վ. Սարգսյան, Մայրենի 4»

Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, կավիճներ, քարտեր առաջադրանքներով, կախարդական արկղ, երկրաչափական պատկերներ՝ առաջադրանքներով:

Դասի մեթոդը՝ «Մտավոր գրոհ», «Համագործակցային ուսուցում», «Արտասովոր խաղ-ներկայացում», «Վերլուծական -համադրական»

Դասի նպատակները ՝

- մշակել հեքիաթի շարադրանքի տարբեր հատվածներում կողմնորոշվելու, տրված հարցի պատասխանը գտնելու և կարդալու կարողություններ:
- կձևավորի հաղորդակցային կարողություն՝ տարբեր իրավիճակում օգտագործել հաղորդակցման ճիշտ ձևերը,
- զարգացնել սովորողների երևակայությունը, խոսք կառուցելու կարողությունը:
- ձևավորել և զարգացնել աշակերտների խոսքի մշակույթը,

Խթանման փուլ: «Մտավոր գրոհ»:

Երեխաները բաժանվում են 3 խմբի՝ ըստ շարքերի: Ղեկավարները կմոտենան արկղին և կվերցնեն քարտեր՝ որտեղ գրված է, թե ինչ առաջադրանք պետք է կատարեն:

| 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ |
|---|---|---|
| **Կազմել երկխոսություն և ներկայացնել դերային խաղով, որում ընկերները իրար դիմում են խնդրանքով:** | **Կազմել երկխոսություն և ներկայացնել դերային խաղով, որում ուսուցիչը ինչ-որ բան է հրամայում:** | **Կազմել երկխոսություն և ներկայացնել դերային խաղով, որում մայրիկը ինչ-որ բան է կարգադրում:** |

1.Չի կարելի խոսել խմբով:

2.Երկխոսության ընթացքում պետք է նայել զրուցակցի դեմքին:

3.Խոսողի մտքերին կարելի է արձագանքել շարժումներով կամ նշաններով: («Համաձայն եմ», «Համաձայն չեմ», «Չհասկացա...»):

4.Հարկավոր է հարգանք դրսևորել խոսողի նկատմամբ և նրա խոսքը լսել մինչև վերջ:

5.Բացառվում են ծաղրանքը, ոչ բարեհաճ ու վիրավորական մեկնաբանությունները:

**Իմաստի ընկալման փուլ**

Երեխաներին հանձնարարվում է կարդալ բնագիրը՝ ուշադրություն դարձնելով նախադասությունների կետադրական նշաններին և դրանց արտասանությանը: Առաջադրվում է առանձնացնել այն նախադասությունները, որոնք արտահայտում են հրաման, խնդրանք, կարգադրություն: Օրինակ՝

-Թագավո՛րն ապրած կենա, մեր քաղաքում մի խաբեբա է հայտնվել:

-Է՛ն Աստված, ճիշտ եմ ասում:

-Չէ՛,Աստված ինձ թույլ չի տա, որ էդ բանն անեմ:

-Խորհրդակա՛ն, - հրամայում է թագավորը:

Այստեղից հետևություն, որ խոսելիս մարդիկ ոչ միայն հարցեր են տալիս իրար, այլև հաճախ հրամայում, խնդրում կամ կարգադրում են:

| |
|---|
| Հրաման, կարգադրություն կամ խնդրանք արտահայտող նախադասությունը կոչվում է հրամայական նախադասություն: |

Հրաման արտահայտող բառի վերջին ձայնավորի վրա դրվում է շեշտ (՛) **խոսի՛ր**: Եթե հրամայական նախադասությունը արգելում է ինչ-որ բան անել շեշտը դրվում է մի մասնիկի վրա՝ **մի՛** խոսիր: Շեշտ ունեցող բառը արտասանվում է կտրուկ և ուժեղ հնչերանգով: **«Արտասովոր խաղ-ներկայացում»:**

**Այս խաղը կարելի է կազմակերպել ըստ հետևյալ առաջադրանքների.**

**1.**Ներկայացրու անելանելի վիճակում գտնվող խաբեբային, որը չէր կողմնորոշվում ինչպես խաբել թագավորին:

2.Ներկայացրո՛ւ թագավորի և խաբեբայի երկխոսությունը, որտեղ խաբեբան ոչ մի կերպ չի կարողանում խաբել թագավորին:

**3.**Ներկայացրո՛ւ թագավորի խորհրդատուի, որը չի կարողանում համոզել խաբեբային, որպեսզի ներկայանա թագավորին:

**Կշռադատման փուլ**

Դասարանը պետք է բաժանել 4-5 հոգանոց խմբերի: Խմբերի բաժանվելուց հետո հարկավոր է յուրաքանչյուր խմբի տալ մի քարտ համապատասխան առաջադրանքներով:

1-ին խումբ

Գտի՛ր հրամայական նախադասությունները:

Դու կապուտակ ծովո՛վ արի՛, Գարնան երգո՛վ, կանչո՛վ արի:

Թեթև՛, թեթև՛ թևո՛վ արի. Արի՛, արի՛, սիրո՛ւն ծիծեռ,

Ծովի փրփուր լանջո՛վ արի՛, Արի՛, արի՛, գարո՛ւն դու բեր:

2-րդ խումբ

Գտի՛ր հրամայական նախադասությունները և շեշտադրի՛ր հրաման արտահայտող բառերը:

Կարդա, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա, գրիր տարին բոլոր.
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը՝ պայծառ ու լուսավոր:

3-րդ խումբ

**Շեշտադրի՛ր հրաման արտահայտող բառերը:**

Իմ թոռնիկնե՛ր, Դիմավորեք. Ձու չջարդեք...
Ժիր մանուկնե՛ր, Պարտեզներում Այս խրատս
Գարուն եկավ. Այգիներում Լավ իմացեք,
Գովքը արեք, Հյուրընկալեք: Թռչուններին:
Թռչուններին Բույն չքանդեք, Պաշտպանեցեք:

**«Անսովոր խաղ-ներկայացումը»** երեխաներին հնարավորություն է ընձեռվում ազատ ինքնարտահայտվելու: Այն թույլ է տալիս վերափոխել հեքիաթը և խաղալ այնպես, ինչպես հուշում են սեփական երևակայությունը , փորձը և հույզերը:

**Դասի թեման՝** «Քաջ Նազարը» հեքիաթը, բացականչական նախադասություն

Դասագիրքը՝ Վ.Սարգսյան, «Մայրենի 4»:

**Անհրաժեշտ նյութեր՝** դասագիրք, օժանդակ դասագիրք ՝ «Պատկերազարդ քերականություն», կավիճներ, տարբեր զգացմունքներ արտահայտող նկարներ, կավիճներ, գունավոր շերտիկներ՝ խմբային աշխատանքի համար, Ա4 չափի թղթեր:

**Դասի մեթոդը՝** Համագործակցային ուսուցում՝ «Մտավոր գրոհ», «Վերլուծական-համադրական» մեթոդներ:

**Դասի նպատակները՝**

- գաղափար կկազմեն բացականչական նախադասությունների մասին,
- կսովորեն նկատել ու գնահատել հերոսների զգացմունքները բնագրի տարբեր հատվածներում,
- կկարողանան վերարտադրել հեքիաթը համապատասխան հնչերանգով,
- կտեսնեն ու կգնահատեն բառերի պատկերավորությունը և արտահայտչականությունը:
- կզարգանան ընթերցողական կարողությունները

**Խթանման փուլ:**Երեխաների առաջադրվում է իրավիճակներ վերցված առօրյա կյանքից, որոնց համապատասխան կազմում են նախադասություններ:
Օրինակ՝Ինչ արտահայտություններ եք արտաբերում, երբ՝

- հաղթում եք,
- վախենում եք,
- զարմանում եք,
- ինչ-որ բան չի ստացվում,
- ինչ-որ բան եք գտնում,
- ինչ-որ բան եք ցանկանում,
- անսովոր բան եք նկատում:

**Իմաստի ընկալման փուլ**

Գրատախտակին փակցվում է պաստառ, որի վրա նկարված են զանազան պատկերներ, որոնք արտահայտում են տարբեր զգացմունքներ: Երեխաներին առաջադրվում է նայելով նկարներին երևակայել , թե նրանցից յուրաքանչյուրը ինչ զգացմունք է արտահայտում: Կազմել նկարների բովանդակությանը համապատասխան հնչերանգով նախադասություն:

-Զա՜ն, Ոսկե ՈՒռա՜, գնալու բանալին գտա:

-Երանի՜, Ոսկե բանալին գտնեի:

-Վա՜յ, բոքոնիկը ճանապարհն է կորցրել:

- Ա՜խ, ափսո՜ս, ինչ մեծ ձուկ էր...

- եմ խաղալու:

Երեխաները, կատարելով վերլուծություն, տեսնում են, որ հերոսներից յուրաքնչյուրը այս կամ այն պատճառով ինչ-որ հույզ է արտահայտում. Բուրատինոն ուրախ է, Բուրատինոն տխուր է, արջուկը տխուր է, տղան ուրախ է: Այս բոլոր հույզերն ու զգացմունքները մեր հերոսներն արտահայտում են տարբեր բացականչություններով: Առանձնացնելով բացականչություն արտահայտող բառերը՝ նկատում են, որ այդ բառերի վերջին վանկի ձայնավորի վրա դրված է բացականչական նշան ( ՛ ): Բացականչական նշան ունեցող բառը երկար է արտասանվում: Երեխաները ուսուցչի օգնությամբ տալիս են սահմանումը:

| |
|---|
| ՈԻրախություն, հիացմունք, ցանկություն, զարմանք, ափսոսանք, վախ և այլ զացմունքներ արտահայտող նախադասությունը կոչվում է բացականչական |

**Կշռադատման փուլ:** Հանձնարարվում է մեկ անգամ ուշադիր կարդալ բնագիրը և դուրս գրել բացականչական նախադասությունները:

**Խմբային աշխատանք**:Աշակերտները բաժանվում են 3 խմբի՝ յուրաքանչյուրում յոթական աշակերտ (այն համապատասխանում է առաջադրանքի հարցերի քանակին): Ձևավորվում է երեք խումբ՝ ըստ տրված գույների՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն:

1-ին խումբ. շերտիկի գույնը՝ կարմիր:

Կարդա՛ առոգանությամբ և որոշի՛ր բացականչական նախադասությունները:

-Հե՛յ, լավ մանրո՛ւք, Ապարանջա՛ն... Խունջիկ-մունջիկ
Ասեղ, հուլո՛ւնք, Հա՛վ, ձու բերե՛ք, Հարսն ու աղջի՛կ,
Մատնի՛ք, մարջա՛ն, Առե՛ք, տարե՛ք, Էժա՛ն կտա՛մ, լա՛վը կտա՛մ...

2-րդ խումբ. շերտիկի գույնը՝ կապույտ:

Գտի՛ր բացականչություն արտահայտող բառերը և դի՛ր բացականչական նշանը:

Ախ, էսպես էլ գիժ ամի՞ս, Ա՛խ, ինչ լավ է սարի վրա
Մարդու հանգիստ չի տալիս... Անցնում օրերն անուշ-անուշ...

3-րդ խումբ. շերտիկի գույնը՝ ծիրանագույն

**Գտի՛ր հրամայական և բացականչական նախադասությունները: Համապատասխան բառերի վրա դի՛ր շեշտ կամ բացականչական նշան:**

Արև՛, արև՛, դու մեզանից Զմեռն եկավ և ամեն ինչ
Երբ հեռացար դեպ հարավ, Հափշտակեց ու տարավ:

Այսպիսով, աշխատելով ԽԻԿ համակարգով՝ ուսուցչակենտրոն ուսուցումը փոխարինվում է աշակերտակենտրոն ուսուցմամբ, որի միջոցով էլ հնարավոր է տալ աշակերտների ողջ կյանքի ընթացքում ծագող «ինչու»-ների պատասխանները: Սովորողները արդյունավետ կերպով սովորում են իրարից միասին աշխատելու արդյունքում:

Խաղային գործունեությունը խթանում է աշակերտների երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները: Բացի դրանից, խաղային իրավիճակը նպաստում է, որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն: Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը: Երկխոսությունը դասերի ժամանակ յուրատեսակ դիդակտիկ հախորդակցման մթնոլորտ է, որն աշակերտներին օգնում է տիրապետել ոչ միայն մտածողության երկխոսական միջոցին, այլև ապահովում անդրադարձը, զարգացնում անձի ճանաչողությունը, ապահովում է հուզաարտահայտչական ապրումը:

## Եզրակացություն

1.Տարրական դասարաններում կիրառվող ժամանակակից մեթոդների օգնությամբ ուսուցման գործընթացը դառնում է ավելի մատչելի, քանի որ դրանք ավելի շատ շեշտը դնում են ցուցադրական տեսազննական տարրերի կիրառման վրա:

2.Նախադասության ուսուցման ծրագրային բովանդակության մեջ անհրաժեշտ է ներառել մի շարք գործնական կարողություններ, որոնց բացակայությունը հանգեցնում է խոսքային մի շարք սխալների (ինչպես բանավոր, այնպես էլ՝ գրավոր խոսքում)

3.Շարահյուսական գիտելիքները՝ մասնավորապես նախադասության տեսակների ուսուցանելու հարցում կարևորում ենք քննադատական (վերլուծական) մտածողության ձևավորումը՝ իրականացնելով բազմաքայլ աշխատանք: Այդ գործընթացում մենք կարևորում ենք լեզվական ցանկացած տեղեկատվությունը դիտարկելը, քննելը, ընդունելը, ձեռք բերած գիտելիքների և կարողությունների շուրջ ինքնուրույն աշխատանք ծավալելը, սեփական կարծիքը արտահայտելը, հիմնավորելը, ուրիշների կարծիքը լսելը և իմաստավորելը: Միաժամանակ մենք կարևորում ենք աշակերտների՝ սեփական համոզմունքներից անհրաժեշտության դեպքում հրաժարվելու (այսինքն՝ իրեն, իր գիտելիքներն ու դատողությունները գնահատելը), նոր գաղափարների առջև «բաց» լինելու ունակությունների ձևավորումը: Սրանք քննադատական մտածողություն ծավալելու արդյունավետ գործընթացը բնութագրող կարևոր բաղադրիչներն են:

4.Տարրական դասարաններում մայրենիի ուսուցման բովանդակությունը, մեթոդները ու միջոցներն անհրաժեշտ է համապատասխանեցնել կրտսեր դպրոցականների ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.«Նախաշավիղ» մեթոդանակ հանդես, «Լույս» հր., Եր., 2004թ.:

2. »Նախաշավիղ» մեթոդանակ հանդես, «Լույս» հր., Եր., 2011թ.:

3. «Նախաշավիղ» մեթոդանակ հանդես, «Լույս՝ հր., Եր., 2012թ.:

4.Խաչատրյան Ս., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, (օգնություն ուսուցչին), Գյումրի, 2006թ, հրատարակված է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

5. Հայոց լեզվի դասավանդման հարցեր, ժողովածու, հեղինակներ՝ Ռ.Բաղրամյան, Զ.Ալեքսանյան, Հ.Մխիթարյան, Ա.Տեր-Գրիգորյան, Երևան, «Հայպետուսմանկհրատ», 1958թ.:

6.Սարգսյան Վ., Ուսուցչի ձեռնարկ, «Լույս» հր., Եր., 1997թ.:

7. Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա, «Լույս» հր., Եր., 2006թ.:

8. Թորոսյան Կ. և ուրիշներ, Մայրենի-3, Մայրենի-4, Եր., 2012թ.: